

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

Ամուսնալուծական դատավարութեան բարենորոգումն,— Վերջերս Արցիբաշևի գործի ժամանակ երևան եկած զեղծումների շնորհիւ, որով պարզուեցաւ թէ ինչպիսի այլանդակ կարգեր կան պրովոսլաւ անհատների ամուսնալուծական խնդիրների գործառնութեան մէջ,— արդարադատութեան նախարարը մի նոր օրինագիծ է մշակել Պրովոսլաւ Եկեղեցուն պատկանող անհատների ամուսնալուծութիւն ստանալու մասին և մօտ ժամանակներս նախարարների խորհրդի քննութեան կտայ:

Ամուսնալուծական գործերի սովորական դատավարութեան մէջ մի շատ նշանաւոր բարենորոգութիւն է մուծուում,— ամուսնական կեանքի դէմ մեղանշող գործերը հանւում է հոգևոր դատարանների շրջանառութիւնից: Ամուսնութեան սրբութեան դէմ մեղանշող կամ ամուսնութեան անընդունակութեան համար սկսած գործերը խնդրով ուղղում են այն թեմական Ատեաններին, որտեղ ապրում է խնդրատուի ամուսինը: Խնդիրն ընդունուելուց յետոյ ամուսինները հրաւէր են ստանում ներկայանալ Ատեան, ուր և յորդորւում է նոցա համաբնակիլ իրար հետ. սակայն այդ գործողութիւնը երեք ամսից աւելի պիտի չը տևէ: Եթէ համաբնակութիւնը տեղի չունեցաւ, այն ժամանակ ամուսնալուծական գործը դադարեցնւում է հոգևոր Ատեանի մէջ, մինչև որ բողոքողը կներկայացնէ աշխարհիկ դատարանի վճռի պատճէնը, մեղադրուող կողմի ամուսնական սրբութեան դէմ մեղանշացած լինելու և կամ ամուսնական կեանքի անընդունակ լինելու ապացոյցները: Այդպիսի ամուսնալուծական խնդիրները բողոքողի կողմից ներկայացւում է շրջանային դատարանին: Ամբողջ դատավարութիւնը, ինչպէս և վճռի յայտարարումը, կատարւում է դռնփակ: Դատարանը, եթէ չէ բաւականանում կողմերի ներկայացրած ապացոյցներով, կաւորող է հարց ու փորձի ենթարկել ամուսիններին, նոցա ազգականներին, հարեաններին և այլ կողմնակի անձերի, ինչպէս և բժշկական քննութեան և կամ ստուգութեան ենթարկել տալ: Կողմերի երդմնական քննութեան վերայ հիմնուած վճիռ դնել ան-

կարելի է: Ամուսնութեան սրբութեան դէմ մեղանշողի ասածներն ու ապացոյցներն ընդունւում են միայն այն դէպքում, երբ ամուսնութեան կապի խախտումն ապացուցւում է փաստերով և գործի մէջ եղած վկայութիւններով:

Երբ աշխարհիկ դատարանի առաջ պարզւում է ամուսնական սրբութեան դէմ կատարուած յանցանքը կամ ամուսնութեան անընդունակութեան պարագան և դատարանը ճանաչում է այդ իրողութիւնը. բողոքողը կարող է խնդրել Կոնսիստորիային իւր գործի դատավարութիւնը վերսկսել: Դատավարութեան այդ շրջանում ամուսնալուծական գործի վերաբերեալ բոլոր փաստերը Հոգևոր դատարանը կարող է յայտնել ոչ միայն կողմերին, այլ և նոցա հաւատարմատարներին: Գործը վերստուգելուց յետոյ Հոգևոր ատեանը ձեռնամուխ է լինում ամուսնալուծութեան խնդրին, որի ժամանակ քաղաքացիական դատարանի ամուսնութեան կապի խախտման և կամ ամուսնութեան անընդունակութեան ապացոյցները, որոնք հիմք պիտի ծառայեն ամուսնալուծութեան համար, — Հոգևոր ատեանի համար պարտադիր ապացոյցներ են:

Հոգևոր ատեանի վճիռը կողմերին պէտք է յայտնուի ոչ ուշ քան երեք ամիս այն օրից, որ օրից բողոքարկուն խնդիր է տուել իւր գործի դատավարութիւնը վերսկսելու, և այդ շրջանում Հոգևոր իշխանութիւնն իրաւունք ունի կրկին անգամ կողմերին հաշտութեան հրաւիրել և յորդորել: Թեմական Ատեանի վճռից դժգոհ կողմն իրաւունք ունի բողոք ներկայացնելու Սինօդին երկամսեայ ժամանակամիջոցում: Սինօդի համար ևս հաւասարաչափ պարտադիր պարագայ է քաղաքացիական դատարանի՝ ամուսինների մասին ներկայացրած ամուսնութեան դէմ կատարած ապացոյցները և ամուսնական կեանքի անընդունակութեան պարագան:

* * *

Աստուածաւելի սրբագրութիւնը:—Պետրոգրադի Հոգևոր Ճեմարանի հանդիսարանում հանդիսաւոր նիստ ունեցաւ Ռուսաց աստուածաշնչի սրբագրութեամբ զբաղուող Յանձնաժողովը: Պատուակալ նախագահ ընտրուեցաւ Պետրոգրադի Պիտիրիմ միտրոպոլիտը, իսկ Յանձնաժողովի զբաղմունքների նախագահ՝ Եամբուրգի առաջնորդ Անաստասիյ եպիսկոպոսը: Ժողովին ներկայ էին Ճեմարանի ուսուցչապետները, Գիտութեանց Ճեմարանի, Պետրոգրադի և Մոսկուայի համալսարանների ներկայացուցիչները: Աստուածաշնչի վերջնական սրբագրութեան խմբագրումը, ի նկատի ունենալով նորա հետ կապուած բարդ, գիտական պահանջներին գոհացում տալու խնդիրները, սպասածից շատ ու շատ

երկար կը տևէ: Բաւական է ասել միայն, որ Մատթէոսի աւետարանի սրբագրութիւնը խլել է քսան տարուց աւելի:

* * *

Մարտի 1-ի Թագաւոր Կայսրը բարենաճել է հրամայել, որ այսուհետև ոռոսաց Սինօդի գործերի մասին եղած զեկուցումներն ժամանակ, որ ըստ սովորութեան կատարուում էր Սինօդի աւագ-դատախազի ձեռքով, այսուհետև միշտ ներկայ լինի նաև Սինօդի նախանդամ-նախագահողը, որպէս զի այդ զեկուցումների ժամանակ եղած եկեղեցական խնդիրների մասին կարևոր բացատրութիւններ և լուսարանութիւնները արուեն, ըստ նախաւանդ առաքելական և եկեղեցական կանոնների, եկեղեցու ներկայացուցչի կողմից:

Ֆ. Գ. Սամարինը շնորհաւորելով այդ նորամուծութիւնը ընդգծում է այն հանգամանքը, որ այդ նորամուծութիւնը գործնական հետևանքներ կունենայ միայն այն ժամանակ, երբ Սինօդը կամ թեմական առաջնորդները ձեռք բերեն, իրապէս, կատարեալ անկախ դրութիւն Սինօդի աւագ-դատախազից: Եւ մարտի 1-ի հրամանը, իբրև երախայրի՛ք գործի խոստանում է այդպիսի առհաւատչեայ: Եւ այդ խնդիրն աւելի էական է և նշանակալից, քան եկեղեցական կեանքի վերանորոգութեան և բարեփոխութիւնների հարցերը, ամուսնալուծական խնդիրների վերաքննութիւնը, որ յիշատակուած են աւագ-դատախազի ճառի մէջ:

Թեմական առաջնորդներին Սինօդի անդամակցութեան կանչելու խնդիրը հիմնաւոր և ամուր կարգերի պիտի վերածուեն, անխախտ հիմքերով, այնպէս որ այդ գործը որ և է կողմնակի ազդեցութիւնից բոլորովին ազատ և անկախ լինի: Դորա հետ անհրաժեշտ պայման է՝ չեզոքացնել այն ազդեցութիւնը, որ բարձր հոգևորականութիւնն ունի առաջնորդական գործերը վարելու մէջ: Ուստի, նախ և առաջ պէտք է միանգամ ընդ միշտ վերջ տալ հոգևորականներին որ և է աշխարհիկ շքանշան և նոյն իսկ եկեղեցական պարգևներ շնորհելու սովորութեանը, երկրորդ բոլորովին ձեռք քաշել թեմակալ առաջնորդներին մի թեմից միւսը տեղափոխելու կարգերից, ինչ պատճառներից կամ նկատումներից և չբղխէր այդ տեղափոխութեան խնդիրը:

Միմիայն այս պայմանների շնորհիւ թեմակ. առաջնորդները, եպիսկոպոսները, թէ անհատապէս և թէ Սինօդի կազմի մէջ, կդրուին այնպիսի դրութեան մէջ, որ կարող կլինեն ազատօրէն և անվերապահ իրենց կարծիքները յայտնել եկեղեցական գործերի և խնդիրների նկատմամբ՝ աւագ-դատախազի ներկայութեամբ և հաւասար, ինչպէս եկեղեցու անկախ և ազատ ներկայացուցիչներ:

Պրովօսլաւ եկեղեցու ծխական կանոնադրութեան նախագիծը: — Պրովօսլաւ եկեղեցու բարենորոգութիւններէ խնդիրներէ Յանձնաժողովը ձեռնարկել է կազմել Ռուս եկեղեցու ծխական կանոնադրութեան կանոնադրութիւնը: Այդ Յանձնաժողովի ղեկուցանողը, վ. ն. Լ'վով, իւր ղեկուցման մէջ Սինօդի կազմած օրինագծի և 1906 թ. եկեղեցական ժողով գումարելու նախապատրաստական Ատենի կազմած ծրագիրներէ մէջ տարբերութիւն դնելու կողմնակից է: Վերջնի մէջ իբրեւ հիմնական սկզբունքներ, գտնւում են այնպիսի կէտեր, որ Սինօդական ծրագիրը չունի. այն է ա) ծխական համայնքի իրաւունք, որով կարող են համայնքի եկեղեցականներին եպիսկոպոսութիւն առաջարկել. — բ) կառավարել ոչ միայն համայնական, այլ և եկեղեցու գոյքն ու կարողութիւնը. — գ) համայնքի վերայ տուրքեր դնելու իրաւունք. — դ) եկեղեցական-ծխական դպրոցները կառավարելու իրաւունք. և ե) եղբայրական դատ: — Զեկուցանողի տեսակէտով այդ իրաւունքներն այնպիսի էական խնդիրներ են, որ առանց դոցա բարենորոգութիւնների խնդիրը մեռած տառ կ'մնայ, և որ չարժէ իսկ կեանքի մէջ մտցնել այդ բարենորոգումները, որով դոքա միմիայն այժմ իսկ գոյութիւն ունեցող եկեղեցական-հոգաբարձութիւնների մարմնի պէս մի գործոն կ'դառնան, միայն մի քիչ աւելի լայն իրաւունքներով: Ինչ վերաբերում է, յատկապէս, եկեղեցական-ծխական դպրոցներին, ղեկուցողի կարծիքով, եթէ այդ դպրոցների պահպանութեան համար պետական դանձարանից որոշ գումարներ տալու գաղափարը Դումայում խոչընդոտների հանդիպելով հանդերձ, Դուման այնուամենայնիւ այդ գումարները տուեց, ապա այդ միմիայն այն հեռաւոր նպատակով և յուսով, որ եկեղեցական-ծխական դպրոցները պիտի վերածուին համայնական դպրոցների տիպի իսկապէս, այլ ոչ այժմեան բիւրօկրատիկ տիպի պահպանութեան: Իսկ եթէ այդ յոյսն ևս ի դերեւ կելնէ, ապա դորանով իսկ պետական գանձարանից տրուելիք նպաստի իմաստն իսկ կորչում է: Ի վերջոյ նա առաջարկում է Սինօդի կազմած ծրագիրը անտես չառնել, այլ իբրեւ հիմունք ընդունելով, մուծել նորա մէջ այն բարեփոխութիւնը, որ եկեղեցական ժողովի գումարման նախապատրաստական մարմինն է կազմել: Յանձնաժողովն համաձայնեց այդ առաջարկին և առաջարկեց ղեկուցողին, հանել ամբողջովին նախապատրաստական մարմնի կազմած ծրագրի կանոններից նոյն կանոններն՝ ամբողջ բնագրով, որ պէտք է մտնեն նոր կազմուելիքի մէջ:

խղնի ազատութիւն:—Ռուսաց բարձր հոգեւոր իշխանութիւնը մի քանի սկզբունքային խնդիրներ ի նկատմամբ կամենում էր բաւարարութիւն տուած լինել նոր բացուող Պետական Դոմային:—Այդ խնդիրներից մէկն էր և խղճի ազատութեան խնդիրը. Ռուսաց Սինոդի խորհրդակցութիւնների ժամանակ եկած են այն եզրակացութեան, որ հնարաւոր եղածին չափ այդ կողմից պէտք է բաւարարութիւն տալ: Ինչպէս յայտնի է այս խնդիրը նոր չէ ծագում և օրէնսդրութիւնը վաղուց ի նկատի ունեցել է այդ: Սինոդի և օրէնսդրական հաստատութիւնների մէջ այդ առթիւ իւր ժամանակին բաւական խոշոր ընդհարումներ են տեղի ունեցել: Պետական Դոման իւր վերջին շրջանում այլ ևս չէր կամենում յարուցանել այդ հարցը, սակայն նոյն իսկ եկեղեցական շրջաններում, ինչպէս երևում է, եկել են այն եզրակացութեան, որ դա կենսական հարցերից մէկն է և նորա հրապարակ գալն անխուսափելի:

Առաջին ձայն բարձրացնողն այս անգամ Ուֆիմայի թեմական եպիսկոպոս Անդրէյն է, (նախկին իշխան Ուխտոմսկիյ) որ առանց քաշուելու իւր կատարեալ ներքին համոզումն է յայտնում, որ խղճի ազատութիւնը, կրօնի ընտրութիւնը, կատարեալ ազատութեամբ պէտք է օգտուի: Այդպիսի մի եկեղեցական բարձր աստիճան հովուի ձայնն առաւել ևս նշանակութիւն է ստանում այն տեսակէտից, որ եկեղեցու նուիրապետութեան աւագ անդամները, սկզբունքով, միշտ այդ խնդրի օրէնքի սահմանափակումի կողմն են եղել: Բայց Անդրէյ եպիսկոպոսը, ոչ միայն իբրեւ սկզբունք, այլ և իբրեւ գործնական կլակէտ, յայտնում է, որ «Քրիստոսի հաւատի ճշմարտութեան լոյսը կողմնակի հովանաւորութեան տակ, միայն խաւարել և մարել կարող է»:

Ինչո՞ւ: Երկու պատճառով, բացատրում է Անդրէյ եպիսկոպոսը: Նախ, արդարացի նկատում է,—«միմիայն խղճի ազատագրութեան և կրօնի ազատութեան պարագան կարող է մեր հոգեւորականութիւնը իւր հովուական վարդապետութեան բարձրութեան վերայ դնել և այդ միայն խթան կլինի, որ նա, հոգեւորականութիւնն, զգայ իւր պարտաւորութիւնների սահմանն ամբողջապէս և գիտակից վերաբերմունք ունենայ դէպի այդ»: Իբրեւ տխուր ճշմարտութիւն, սակայն ըստ ամենայնի արդարանում է այդ հանգամանքը ամբողջ քրիստոնէական, երկար դարերի, պատմութեան անցեալով և փաստերով: Արտաքին պետական բացառիկ հովանաւորութիւնը միշտ եկեղեցականութեան եռանդի և ոգու վերայ բացասական ազդեցութիւն է ունեցել. այդպիսի հովանաւորութիւնը միշտ թուլացրել, ջլատել և շատ անգամ իսկ մեռցրել է այդ ներքին կրակը: Ամեն անգամ երբ պետական արտաքին ոյժը հանդէս է եկել իբրեւ

հովանաւոր պաշտպանելու պետական կրօնը սահմանափակող օրէն-
սդրութեամբ և արգելքների ճնշմամբ՝ ոչ պետական կրօններին
նկատմամբ, այդպիսի բռնութիւններին եկեղեցական պաշտօնէութեան
մէջ նկատուել է ներքին մղումի, իւր պարտականութիւնների աշա-
լուրջ հսկողութեան ակնյայտնի թուլացում կրօնական կեանքի
նկատմամբ: Եկեղեցու, ինչպէս և առհասարակ ամեն մի գործի մէջ,
եռանդ ու աւելն արծարծւում և պահպանւում է մաքառման ան-
հրաժեշտութեան պայմանով. վտանգի բացակայութիւնը մեղկու-
թեան ու թմրութեան առաջին քայլն է: Տարրական ճշմարտութիւն
է, որ իւրաքանչիւր մարդ հետզհետէ բարոյական կամ ներքին անկ-
ման է դիմում, երբ նորա մէջ հանգչում է անհրաժեշտ ինքնագործ-
նէութեան կայծը. երբ նորա փոխարէն ամեն ինչ կատարւում է մի
աւրիշը: Պետութիւնը իւր վերայ առնելով Եկեղեցու անմիջական
գործը՝ օտար ազդեցութիւններից պաշտպանել եկեղեցու անդամնե-
րին, եկեղեցական պաշտօնէութեան համար մի բնական երևոյթ է
դառնում պետական ոյժին կռթնելու անհրաժեշտութիւնը:

Ի՞նչ մեծ տարբերութիւն կայ առաջին քրիստոնէական դա-
րերի և յետագայ շրջանների մէջ, երբ եկեղեցին պետութեան
թևի տակ էր հովանաւորութիւն գտել: Այն ժամանակ քրիստո-
նէական եկեղեցու կեանքը աղբիւրի պէս էր բղխում, եռում էր
եկեղեցականութեան եռանդը և խաչը յաղթական թափով էր
նուաճում նորանոր երկիրներ: Վերջացաւ մաքառման շրջանը,—
թուլացաւ և քրիստոնէական կեանքի եռուն կամքը: Քրիստոնէու-
թեան ամենաէական յաղթութիւնները կատարուել են նորա ներ-
քին ոյժերի շնորհիւ, իսկ երբ եկեղեցական գործը արտաքին ոյժի
ձեռքն է անցնում, այդ ժամանակ քրիստոնէական համայնքը
միմիայն անհամապատասխան տարրերով է ճոխանում:—Ռուսա-
կան եկեղեցական կեանքում եկեղեցին օգտւում էր նոյն իսկ իւր
սկզբնական—ծագումի շրջանում պետական ոյժի զօրեղ պաշտ-
պանութեամբ: Հետևանքն այն եղաւ, որ ոչ մի քրիստոնէական
վայրում, եկեղեցու վարդապետութեան և ուսուցման գործն, իւր
ընդարձակ իմաստով ի հարկէ, այնչափ քիչ զարգացում չունեցաւ,
որչափ այնտեղ: Սովորական երևոյթ է դարձած այդ մեղը ձգել
հոգևորականների անպատրաստ վիճակի վերայ, մինչև ժԸ. դարը
մանաւանդ, բայց նոյն իսկ յետագայ շրջաններում, երբ ռուս
հոգևորականութիւնն աւելի պատրաստուած և կրթուած վիճակի մէջ
էր, միշտ էլ աչքի էր ընկնում իւր լուռ անտարբերութեամբ դէպի
եկեղեցու ներքին կեանքը: Եւ ի՞նչ ահագին ոյժ, եռանդ ու ջանք
է պէտք, հարցնում է Անդրէյ եպիսկոպոսը, որ հոգևոր դասը իւր
թմրութեան հասած վիճակից ելնէ և հոգևոր գիտակից կեանքով
ապրէ, մանաւանդ որ կեանքը ինքն արդէն ինքնագործնէութեան

մեծ թափով է առաջ դնում: Հերժուածներ չհոսանքի ու թափի առաջ Պրովօսլաւ հոգևորականութիւնն անկարող էր որ և է պատնէշ դնել, բացի արտաքին արգելափակումից. ուստի և ալիքն իւր ամբողջ թափով հեղեղեց ուսական երկիրը: Ապագայում ևս նոյն կեանքն ապրել, կնաշանակէ միայն Պրովօսլաւ հոսանքի հակառակ տարրերը զօրացնել և քաջալերել:

Այդ դրութիւնն ունի իւր երկրորդ բացասական հետևանքը, որ նոյնպէս պատմութեան դասերից է առնուած: «Պաշտպանող դրութիւնն ու վիճակը, ասում է Անդրէյ Եպիսկոպոսը, մեղում առաջ բերեց այն անապատը, որի մէջ այժմ մենք կեանք ենք վարում. քրիստոնեայ եկեղեցու համայնքի անդամներից և ոչ մէկը իւր համար պարտադիր չէ համարում Քրիստոսի ճշմարտութիւնների պաշտպան լինել»: Ահա պետական պաշտպանութեան երկրորդ հետևանքը, որ առաջ է եկել ոչ դիտակցաբար, այլ ակամայից և իրերի պատմական ընթացքի հետևողականութիւնից: Միացնելով հոգևորականութեան ինքնագիտակից գործնէութիւնը, եկեղեցական կազմակերպութիւնները, քրիստոնէական պետականութեան յենուած վիճակն սպանում է քրիստոնէական համայնքի ինքնագործնէութիւնը: Եթէ եկեղեցականութիւնը և նորա ղեկավարներն ու առաջնորդող գլուխները միմիայն պետականութեան վերայ յենուելու վիճակի էին հասել, ապա առաւել ևս եկեղեցական համայնքը իւր ձեռները ծալած սպասելու վիճակի պիտի հասնէր: Քրիստոնէական առաջին դարերում Քրիստոսի վարդապետութեան դրօշակն ամբողջ համայնքի ձեռքն էր, ամբողջ ժողովուրդն ու ազգն էր տանում այն, ուստի և՛ ամուր էր և՛ հաստատուն նորա հիմը: Իսկ երբ պետականութեան պատուանդի վերայ դրին, այն ժամանակ ժողովրդին հասկացրին, որ նորա հոգածութիւնն ու խնամքն այլ ևս աւելորդ է: Եկեղեցական նոր յարաբերութիւնների շնորհիւ ժողովուրդը մեկուսացաւ եկեղեցական կեանքի ներքին պատասխանատուութիւնից, թողնելով եկեղեցու շահերի ամբողջական պաշտպանութիւնը հոգևոր ղեկավարներին և պետական իշխանութեան: Այն ինչ եկեղեցականի և եկեղեցու իսկութեան զօրեղ պաշտպան կարող էր լինել միայն եկեղեցական ամբողջ համայնքը, որ սկզբից և եթ հաւատի պաշտպան էր. և այդ մեկուսացման պարագան էր, որ այնքան դառն հետևանքներ ունեցաւ եկեղեցական-պատմական ծանր փորձութիւնների ժամանակ: Քրիստոնէական ճշմարտութիւնը, որ այլատարր և օտար պաշտպանութեան էր յանձնուած, ամենից աւելի անպաշտպան վիճակի մէջ ընկաւ:

«Պէտք է ազատագրութեան մաքուր մթնոլորտ...», որպէս զի Քրիստոսի լոյսը պայծառ շողով փայլէ լաւագոյն և մաքուր

խղճամտութիւններէ մէջ և իւր ամբողջ ոյժն ու ազդեցութիւնը դնէ տկար խղճով անհատներէ վերայ» — ասում է Անդրէյ եպիսկոպոսը: «Ազատութիւնը պէտք է, ոչ թէ օտարադաւան անհատներէ համար, այլ նոյն իսկ եկեղեցու ինքնազարգացման, ծաղկման և բարիքի համար»:

* * *

Միւռոնի օրհնութիւն: — Ապրիլի 7-ին, Աւագ-Հինգշաբթի օրը, Մոսկուայում մեծ հանդիսաւորութեամբ կատարուել է Ս. Միւռոնի օրհնութիւն:

Առաւօտեան ժամը 11-ին, Ս. Վերափոխման տաճարից, զանգակների զօղանջի տակ, ելաւ Միւռոնի օրհնութեան թափորը դէպի Միւռոն պատրաստելու պալատը: Առաջից երկու սինօդական-քահանայ կրում էին հնադարեան բիւրեղեայ խաչերը: Բազմաթիւ հոգևորականութեան գլուխ էր կանգնած Մոսկուայի Միտրոպոլիտը՝ Մակարիյ:

Միւռոնատան Պալատից 64 քահանայ և սրբազնագործ պաշտօնեայ փոխադրում էին Ս. Վերափոխման եկեղեցին 32 արծաթեայ աման Միւռոնով: Միւռոնի Կաթսան (агластеръ) հին-Միւռոնով գլխին կրում էր Վերափոխման տաճարի աւագ-քահանան, — Ն. Ա. Լիւբիմովը:

Տաճարում Միւռոնով լի անօթները դրուեցան սեղանի վերայ, զոհարանի շուրջը և կարմիր մահուղով պատած աթոռների վերայ: Միւռոնի Կաթսան դրուեցաւ զոհարանի վերայ:

Վերաբերման ժամանակ Միւռոնը բերուեցաւ և Արքայական Դռների միջով անցնելով դրուեցաւ բեմի վերայ: Իսկ Գոյափոխութիւնից յետոյ կատարուեցաւ Ս. Միւռոնի օրհնութեան կարգը, որի ժամանակ Արքայական Դռները բաց էին:

Պատարագից յետոյ նոր Միւռոնով լցրած արծաթեայ անօթները սրբազնագործ պաշտօնեաների ձեռքով փոխադրուեցան երկոտասան Առաքելոց տաճարը:

Միւռոն այս տարի եփուած է 50 փութ: Եթէ այդ քանակը բաւական չլինի երկու տարի, ապա եկող տարի դարձեալ Միւռոնօրհնութեան հանդէս կը կատարուի Ս. Միւռոն եփելու համար: